

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25/4

6 մայիսի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ պետի 09.04.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 251850 որոշման դեմ:

Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի գանգատում բերված փաստարկները.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 246-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթների համալիր վերլուծությունից պարզ է դառնում, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենքի 169.1-րդ հոդվածի հետ կապված իրավահարաբերությունների վրա տարածվում են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի դրույթները, իսկ դրանցով չկարգավորվող մասերով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Վարչական մարմինը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի դրույթները, այն է՝ չի ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, բացահայտելով գործի բոլոր, այդ թվում վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Այսպես, ՀՀ ՎԻՎ Օրենսգրքի 247-րդ հոդվածի համաձայն «Վարչական իրավախախտման գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսված վարույթը ենթակա է կարճման հետեյսղ հանգամանքների առկայությ առ դեպքում (...) 7) Վարչական իրավախախտման գործի քննության պահին սույն օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետների ավարտը»:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարելու օրվանից ոչ ուշ քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում»:

Որոշման համար հիմք ծառայած իրավախախտումը Բողոքաբերի կողմից կատարվել է 13.01.2014 թ-ին, հիմք՝ 13.01.2014 թ-ի թիվ 2221262 արձանագրությունը: Վերջինիս համաձայն Բողոքաբերը խախտել է ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀՂՄ շահագործման կանոնների 19-րդ կետի բ) ենթակետի պտհանջները (...):

Այս դեպքում Վարչական մարմինը խախտել է ՀՀ Օրենսդրությամբ սահմանված ժամկետները և վարչական տույժ է նշանակել սահմանված ժամկետի ավարտից հետո, որը հանդիսանում էր վարույթի կարճման հիմք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի, նույն հոդվածի 3-րդ մասի, 19-րդ հոդվածի, 20-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի, ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 277-րդ հոդվածի դրույթների համալիր ուսումնասիրությանից պարզ է դառնում, որ եթե որպես Վարչական մարմնի նախաձեռնություն հիմք ընդունենք Բողոքաբերին ուղարկված ծանուցումները, ապա սույն վարչական վարույթի սկիզբ պետք է դիտել նույնիսկ դրանից առնվազն ավելի վաղ ընկած ժամանակահատվածը, իսկ այս պարագայում ակնհայտ է դառնում, որ Վարչական մարմինը խախտել է նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ժամկետները (հիմք՝ Վարչական մարմնի կողմից ուղարկված և գործում առկա ծանուցումները):

Վարչական մարմինը ոչ միայն չի կատարել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի պահանջները, այլև որպես այդպիսին չի ուսումնասիրել նույնիսկ դրա հետ կապված ապացույցները: Վարչական մարմինը հիմք է ընդունել բացառապես նույն վարչական մարմնի կողմից կազմված փաստաթղթերը, այդ թվում՝ ստուգման ակտը, առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ վարույթի իրականացման պահին այդ ակտն արդեն իսկ վարչական կարգով բողոքարկվում էր:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ 1-ին մասի համաձայն՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը:

Անդրադառնալով Որոշման իրավաչափության հարցին հարկ է նշել, որ Ակտի գործողությունը կասեցված է Բողոքաբերի կողմից 18.02.2014 թ-ին Ակտն օրենքով սահմանված կարգով բողոքարկելու և Գանգատարկման հանձնաժողովի կողմից դրա դեռևս քննության փուլում լինելու փաստերով:

Կասեցումն ինքնին նախատեսում է վարչական ակտի կամ վարչական վարույթի գործողության ժամանակավոր ընդհատում դրա վերաբերյալ քննության կամ դրա հետ փոխկապակցված և առաջինի ելքի վրա անմիջական ազդեցություն ունեցող մեկ այլ վարչական վարույթի ավարտը: Այսինքն, վարչական ակտի գործողության կասեցումը քննության ընթացքում, ըստ էության սահմանափակում է դրա իրավական ուժն ու պարտադիր գործողությունը դրանում նշված սուբյեկտի նկատմամբ, որի ընթացքի վերջում բացառված չէ նաև դրա վերացումը: Հետևաբար, վարչական ակտի իրավաչափության հարցը կասկածի տակ դնելու դեպքում, իրավական ողջամտության սահմաններից դուրս է դրա հիման վրա վարչական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով բողոքաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ 09.04.2014 թ-ի վարչական պատասխանատվության ենթարկելու մասին թիվ 251850 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ պետի 20.12.2013 թ-ի թիվ 2221262 հանձնարարագրի համաձայն 13.01.2014 թ-ին Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 13.01.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների մասին թիվ 2221262 արձանագրությունը, որով արձանագրվել է Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջների խախտման փաստ: Վերը նշված արձանագրությամբ արձանագրված խախտումը հիմք է հանդիսացել թիվ 1108680 ստուգման հանձնարարագրի հրապարակման և 10.02.2014 թ-ին կազմված ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ թիվ 1108680 ստուգման ակտով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված սուգանքի կիրառման համար:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև քննելով 31.03.2014 թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 399 արձանագրությունը և կից նյութերը, ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ պետի կողմից 09.04.2014 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 251850 որոշումը, որի համաձայն Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանը

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 25.000 դրամ:

Քննարկվող դեպքում Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 09.04.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 251850 որոշումն ընդունվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ հետևյալ պատճառաբանությամբ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Հանձնաժողովի համոզմամբ Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջների խախտման փաստն արձանագրվել է 13.01.2014 թ-ի հսկիչ գնումների արդյունքների մասին թիվ 2221262 արձանագրությամբ: Այսպիսով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի կողմից կատարվել է 13.01.2014 թ-ին, այսինքն՝ վարչական իրավախախտման գործի վերաբերյալ որոշումը կարող էր ընդունվել մինչև 13.03.2014 թ-ը:

Ինչ վերաբերվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ ներկայացուցիչների պնդումներին, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի կողմից կատարված լինելու ժամկետի սկիզբը պետք է հաշվարկվել ոչ թե հսկիչ գնումների արդյունքների մասին արձանագրության, այլ՝ ստուգման ակտի կազմման ամսաթվից, ապա հարկ է նշվել հետևյալը:

Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջների խախտման փաստն արձանագրվել է 13.01.2014 թ-ի հսկիչ գնումների արդյունքների մասին թիվ 2221262 արձանագրությամբ, իսկ դրանից հետո 10.02.2014 թ-ին կազմված թիվ 1108680 ստուգման ակտով ընդամենը կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Քննարկվող դեպքում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի կողմից կատարվել է 13.01.2014 թ-ին, սակայն վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 251850 որոշումը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի կողմից ընդունվել է միայն 09.04.2014 թ-ին:


Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 09.04.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 251850 որոշումն ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 09.04.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 251850 որոշումը և գործը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ